

ծայման այդ գեղեցիկ արարքը, շնորհավորում հոգևոր ճեմարանին՝ իր պըտ-
ղաբերման համար, և կոչ անում հայ երիտասարդ սերնդին, որ բարձր գի-
տակցությամբ ապրեն իրենց կյանքը՝ ցանկանալով նրանց տեսնել մեր
Ս. Եկեղեցին պաշտոնացնող սպասավորների շարքում:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում են «Օրհնու-
թյուն արեղայի» կամ «Օրհնություն վեղարի» կարգերը՝ ներկայությամբ
Վեհափառ Հայրապետի:

Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը հանում է նորընծա **Տ. Բաբկեն,**
Տ. Դերենիկ և **Տ. Անուշավան** քահանաների գլխներից սարկավագական ջրբ-
րունը (գդակ)՝ ալն փոխարինելով կուսակրոն քահանայության խորհրդա-
նիշ վեղարով՝ ասելով. «Հանցե Աստուած զհին մարդն գործովք իւրովք:
Աստուած զգեցուցե քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է
արդարութեամբ և սրբութեամբ»:

Արարողությունից հետո Մայր Աթոռի միաբանությունն ու նորընծանե-
րը, թափոր կազմած, Վեհափառ Հայրապետին ողեկցում են Վեհարան, որ
Նորին Սրբությունը ևս մեկ անգամ իր հայրական օրհնությունն ու խրատ-
ներն է բաշխում նորընծաներին ու ցանկանում նրանց տեսնել Հայ Եկեղեցու
արժանավոր սպասավորների շարքերում՝ որպես «մշակք առանց ամօթոյ»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ՝
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Առ Աստված գոհության և փառաբանության զգացումներով կողջունեմ
այս պահը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այսօրվան կյանքին մեջ և առաքե-
լության հավերժագնաց ճանապարհին վրա: Ահավասիկ նոր ընծայումներ
առ Աստված, առ ժողովուրդն հայոց և առ հայրենիքն մեր Հայաստան: Այ-
սօր բոլորիս սրտերը ուրախության, հոգևոր ցնծության ապրումներով գե-
րազվարճ պահեր ապրեցան ի տես չորս երիտասարդ ընծայալներու ինքնա-
նվիրումին Աստուծո սուրբ խորանին, մեր ժողովուրդի ծառայության և Մայր
Աթոռո առաքելության: Առաջին հերթին ես կաղութեմ առ Աստված, որ այս
ընծայումը ըլլա աստվածահաճո և ժողովուրդին համար բարիքներու մի նոր
աղբյուր:

Փառք Քեզ, Տեր, որ այս տարվան ընթացքին երեք անգամ շնորհեցիր
մեր ժողովուրդին տեսարանն այս ինքնընծայումի Մայր Աթոռո պատմա-
կան խորանին բեմին վրա: Երեք անգամներ երիտասարդներ հրաժարվեցին
աշխարհից՝ աշխարհը բերելու և վերստին մոտեցնելու համար Աստուծո,
որովհետև նրանք, ովքեր աշխարհից հրաժարվում են, աշխարհը չէ, որ թող-
նում են, այլ աշխարհի մեջ աշխարհայինը, որպեսզի աշխարհը իրենց ծա-
ռայությամբ, Աստուծո օրհնությամբ լինի միշտ Աստուծո ստեղծած աշխար-
հը և ոչ թե մարդոց՝ այդ աշխարհից ստեղծած և մեղքով անած վիրավոր
աշխարհ:

Փառք Քեզ, Տեր, որ այս օրերին մեր երիտասարդների հոգիների մեջ
կոչումի և ծառայության այս կամքը առողջ և առույգ պահեցիր: Առաջին
հերթին ես պարտք կզգամ իմ գնահատականը տալու մեր Մայր Աթոռի
սիրտը հանդիսացող հոգևոր ճեմարանին: Դուք ճեմարանի մտավոր, իմա-
ցական, հոգևոր ավագանից ծնաք երթալու համար մեր ժողովուրդին: Ես
շնորհավորում եմ ճեմարանի տեսչությանը, ուսուցչական կազմը և ճեմա-

նրան»։ Երբ Հիսուս շրջապատված էր ժողովրդով, խոսում էր նրանց հետ, և շատերը մոտենում էին իրեն, հանկարծ Հայրոս իշխանապետի տնից եկան և ասացին. «Անհանգիստ մի՛ արա վարդապետին, աղջիկդ մահացավ»։ Հիսուս դարձավ Հայրոսին և ասաց. «Մի՛ երկնջիր, միայն հավատա՛, մի՛ վախենար, հավա՛տք ունեցիր, և պիտի ապրի»։ Գնաց տունը և մեռած աղջկան բոլորտիքը գտնվող անձերին, ընտանիքի անդամներին դարձավ, ասաց. «Մի՛ վախենար, ննջում է»։ «Վե՛ր կաց»,—ասաց, և աղջիկը կյանքին վերադարձավ։

Սիրելի հավատացյալներ, հավատքը մարդու մեջ այնպիսի մի ուժ է, որին ոչ ոք չի կարող հաղթել։

Քանի՜ հարվածներ եկան մեր պատմության մեջ՝ մեր հավատքը ապականելու, սպանելու մեր մեջ, սակայն չկարողացան։ Այդ հավատքն էր, որ կենդանի պահեց այս նվիրականագույն, սրբագույն կեդրոնը Հայ Եկեղեցիին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը։ Եթե այդ հավատքը չլիներ, ինչպե՞ս մենք պիտի դիմանայինք պատմության մեջ, հարց եմ տալիս, մեր բանականերո՞վ, մեր գինական ուժո՞վ, մեր տնտեսական միջոցներո՞վ, մեր երկրի հանքերո՞վ, ինչո՞վ պիտի դիմանայինք մենք. այն ուժեղ հավատքով, որ լեռներն անգամ կարող է տեղից հանել, ինչպես ասում է Ավետարանը։ Այդ հավատքն է մեզ ապրեցրել։ «Եկեղեցին հայկական մեն մի քարի տակ գետնի գաղտնի ճամբա մը ունի»։ Այդ ճամփան հավատքի ճամփան է։

Մեր թշնամիները բոլոր ճանապարհները գտան և գոցեցին մեր առաջ, բայց չկարողացան այդ գաղտնի ճամփան գտնել։ Այդ ճամփան անցնում է մեր հոգիներից, մեր սրտերից, մեր խորագույն էությունից։ Դա քրիստոնեական հավատքն է՝ առաքյալներով Քրիստոսից ճառագայթած մեր երկրում, Գրիգոր Լուսավորչով, Տրդատ արքայով հռչակված՝ այստեղ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որտեղից այն ճառագայթում է՝ նույնիսկ երբ մարդկանց աչքերը փակ են այդ ճառագայթների լույսի առաջ։ Այդ հավատքի վերակենդանության այս շրջանին, ո՞վ երկնավոր Հայր, այնպե՛ս արա, որ այսպիսի երիտասարդներ այդ հավատքի նոր կենդանության վկաները դառնան, միանգամայն գործողները այդ հավատքի տարածման համար մեր ժողովրդի կյանքում։

Այսօր հարկավոր է դա՛րձ՝ դա՛րձ դեպի մեր հայրերի սուրբ հոգին՝ ժամանակ, աշխարհագրական սահմանում չհանչցող այդ հոգին, Աստուծո պաշտամունքը ունեցող այդ հոգին, հայոց հողի պաշտպանության նախանձախնդրությունը ունեցող հոգին, մեկ խոսքով՝ մշակույթի նվիրված այդ հոգին, մշակույթով ներթափանցված և հարստացած այդ հոգին և անմահացնող հոգին։ Այդ հոգու սովը նյութական հացի սովից ավելի վատ է։ Եվ դրա համար ես այսօր ձեր այս ընծայումը, սիրելի հայր Բաբկեն, հայր Դերենիկ, հայր Անուշավան և տեր Պարթև, ես ձեր այս ինքնընծայումը Աստուծո՝ անձին մոռացումովը, Աստծուն հիշելովը և ազգին ծառայելովը, ընդունում եմ որպես մի փոքրիկ ովասիս աշխարհով անապատացող մեր կյանքին մեջ։

Եղեք միշտ կանաչ, եղեք միշտ ջրառատ և այնպես եղեք, որ երբ մարդիկ ձեզ նայեն, ձեր խոսքերի միջից ձե՛զ չտեսնեն, այլ տեսնեն Քրիստոսը, տեսնեն Լուսավորիչը, տեսնեն Մեսրոպ Մաշտոցը, տեսնեն այն սուրբերը և հերոսները, որոնք իրենց կյանքը մատաղ ըրին, որպեսզի ազգին կյանքը միշտ փառավոր մնա, և դուք լինեք «մշակք առանց ամօթոյ», լինեք տաճար Աստուծո և ունենաք այնպիսի ծառայություն, որ մեր Մայր Աթոռի հոգևոր ճառագայթումը առավել ուժեղացնի մեր ողջ ժողովրդի կյանքում հավիտյանս. ամեն։